

դուռն՝ միշտ երջանիկ կեանք կը լինի: Ժամանակը կարող է սահել անցնել և երիտասարդութիւնը թառամել և ի հարկէ մէկը կը սահի և միւսը կը թառամի: Այդ կեանքի ճանապարհի վերայ ևս փոթորիկ կարող է բարձրանալ և արեւ փայլել, այնուամենայնիւ, նա անշուշտ երջանիկ կեանք կը լինի, այն երջանկութեամբ, որի համար մահ չկայ: Ահա թէ ինչ կը ցանկայի ես, որ ամէնքս սովորէինք, երբ մեր մտածմունքի աւարկան է Քրիստոս Գեթսեմանի պարտիզում: Հասկանայինք, որ աղօթքը կարող է արեւի ծառագայթները դարձնել նոյն իսկ գէպի մը: Եւ ևս սառած սիրտը, հասկանայինք թէ երկար, յարատեւ ձմեռ, անընդհատ գիշեր չը կայ այն հոգու համար, որի վերայ ծագել է ճշմարտութեան Արեգակը և ծաւալել իւր բժշկարար ճառագայթները: Եւ այս այն պատճառով, եղբայրներ, որ ճշմարիտ աղօթքը միշտ լսելի է լինում... Յիւրաւի կան այլ աղօթքներ, այնքան հակառակ Աստուծոյ կամ: Քին, այնքան անհամապատասխան մարդու իսկական կարիքներին, որ մեզ համար ամէնից լաւն այն է, որ Աստուած չանսայ նոցա, որոմովութեամբ չը լսէ նոցա: Այդ իսկ պատճառով, եթէ մենք աղօթում ենք երկրաւոր բարեաց համար, պիտի աղօթենք միայն պայմանաւոր կերպով «եթէ Աստուծոյ կամքն է», «եթէ մեր բարձրագոյն օգտի համար է», իսկ բոլոր լուսագոյն բաների համար մենք կարող ենք աղօթել համարձակ, անպայման կերպով և համոզուած, թէ ինչ որ խնդրենք կը տայ մեզ, Նոցա մասին խնդրելիս մինչև անգամ կարող ենք նախապէս գիտենալ որ կստանանք, որովհետեւ ինչ որ ցանկանում ենք, այն էլ խնդրում ենք և ինչ որ խնդրում ենք, նորան էլ ձգտում ենք, և ինչի որ ձգտում ենք՝ նորան էլ հասնում ենք: Գեռ չի եղել մի մարդ, որի աղօթքը լսելի եղած չը լինի կամ լիովին լսելի եղած չը լինի, եթէ միայն նա խնդրել է, որ օրըստօրէ աւելի լաւ, բարի, մաքուր լինի որ իւր միտքն ու հոգին բարձրանան գէպի վեր, գէպի երկնային բաները: Եթէ նա աղօթել է, որ իւր հոգուց արմատախիլ լինի առեւտրութեան, հպարտութեան, սրտմտութեան, աշխարհասիրութեան չարիքը, եւ այդ գէպքում ուրիշ պարզեւնորի հետ մէկ տեղ Աստուած պարգեւում է մեզ նաեւ իրեն, միջոց է տալիս մեզ իրեն ճանաչելու, սիրելու և տպրելու իրենով... Եւ երբ մեր բոլոր անգույն ձգտումները տողորուած են միայն մի ցանկութեամբ, այն է տեսնել Աստուծուն, երբ մեզ համար երկնքումը նորա-

նից դատ ոչ որ չկայ, և ոչ որ երկրի վերայ, որին աւելի մերը համարէինք քան Նորան, այն ժամանակ յիշաւի մենք երջանիկ կը լինինք այն երջանկութեամբ, որ պղտորել կարող չէ չարութիւնը, որովհետեւ այն ժամանակ մենք միայն ամէն ինչ պարփակող ցանկութիւն կունենանք, իսկ այդ ցանկութեան կատարումը մերժուել չի կարող: Եւ աւելի անսպասելի է մերժումն այն գէպքում երբ Աստուծուն հաճելի է եղել որ և է միշտ առաքել մեզ. «Դուք այժմ տրամութիւն ունիք, այլ դարձեալ տեսից դձեզ և ուրախ լիցին սիրտք ձեր և զօրախութիւն ձեր ոչ-որ հանիցէ ի ձէնջ»: Այո, երբ Աստուծոյ որդիք կանցնեն Գողգոթայի խաչի ստուերի տակից, այն ժամանակ կիմանան, որ այդ բոտուերովն է ընկնում իրենց ճանապարհը գէպի լուսոյ մեծ Աթոռը, Նոցա համար Գեթսեմանին դրախտ է, որ Աստուած լեցրել է սրբազան պատկերներով, որի խորհրդաւոր լուծութիւնը բնդհատուում է բերկրալից աւետեաց ձայներով, որի սոսկալի խաւարը մեղմացած է և լուսաւորուած երկնաւոր գէպքերի փայլով և հրեշտակային թւերի սաւառնելովն:

Թարգմ. Պատրիկ.



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՂԵՏՈՒԹԵԱՆ
ՍԿԻՋԲԸ.

Մեր ունեցած բոլոր տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ առաջին և երկրորդ դարերում քրիստոնեաները առանձին ժողովարաններ չունէին, այլ ս. հաղորդութեան խորհուրդը կատարելու և միաբան աղօթելու համար մասնաւոր տներում էին ժողովուում (Գործք Առ. 21, 46, Հռոմ. 16, 5 Ա. Կորնթ. 16, 19)։ Այն կարծիքը, թէ կատակոմենները կամ ստորերկրայ գերեզմանատները չին ժամանակ իբրեւ աղօթատեղիներ են ծառայել, հեքքուած պէտք է համարել նորագոյն հնագիտական հետազոտութեանց շնորհիւ։ Երկար նեղ անցքեր են դռքա, որոնք տանում են գէպի քառակուսի փոքր խցիկների, իսկ այդտեղ գտնուում են նահատակների կամ պատուաւոր եկեղեցականների և ընտանիքների շիրիմներ։ Հատ հաւանական է, որ հանգուցեալի ազգականները կամ յարգողները երբեմն հաւաքուում էին այդտեղ ծիրոյ պաշտօն մատուցանելու համար, բայց նոքա այնքան փոքր են, որ շատ մարդիկ տեղաւորել և ուրեմն ամբողջ հասարակութեան համար աղօթատեղի լինել չէին կարող։ Այդպիսի ա-

ղօթածտեղիներ յառաջ եկան հետզհետե Գ. դարում, բայց նոցա մեծ մասը ոչնչացաւ Գիւղեղեղեղեղեղեղ հանած հալածանքի ժամանակ. և այն հանգամանքը, որ կայսերական զինուորները մի քանի ժամուայ ընթացքում կարողացան Նիկոմիդիոյ նշանաւոր եկեղեցին քանդել, գետնին հաւասարեցնել, ցոյց է տալիս, որ այդ ղօթածտեղիները աչքի ընկնող ճարտարապետական շէնքեր չէին:

Կոստանդին Մեծն եղաւ քրիստոնէական ճարտարապետութեան իսկական հիմնադիրը, նորա հրամանով փառաւոր շէնքեր կառուցուեցան թէ՛ նորահաստատ մայրաքաղաքում և թէ՛ Նիկոմիդիայում ու ուրիշ նշանաւոր քաղաքներում: Իսկ նորա մայր Հեղինէն կանգնել տուաւ Երուսաղէմի և Բեթղէհէմի հոյակապ տաճարները: ճարտարապետական այն ոճը, որով կառուցուած էին այդ բոլոր տաճարները և որ տիրապետող մնաց մի քանի դար շարունակ՝ բաղիլիկի ոճ է կոչուում և յառաջ է եկել հին հեթանոսական շէնքերի հետեւողութեամբ:

Քրիստոնէութիւնը պետական կրօն դառնալուց յետոյ, ինչպէս իւր վարչական կազմակերպութեամբ ստիպուած էր յոյն—հռոմէական աշխարհի մէջ տիրապետող կարգերին համակերպել, այնպէս նաև պաշտամունքի վերաբերեալ առարկաներովն ու սովորութիւններով ճեղ տեղ, ինչպէս յայտնի է, հեթանոսական տաճարներ իրենց ամբողջ կազմութեամբ քրիստոնէականի փոխուեցան և այդպէս շատ բան պահուեցաւ հին ձևով, բայց նոր բովանդակութեամբ, եթէ յատկապէս բաղիլիկի ոճը գործադրութիւն է գտել նոր սկսուող եկեղեցական ճարտարապետութեան մէջ՝ պատճառը հաւանականաբար նորա քրիստոնէական պաշտամունքի համար ներկայացրած յարմարութիւնն է: Այդ ոճը իւր սկիզբը և իւր անունն առել է Աթէնքում կառուցած Թափաւորական դատարանից, որ մի երկայնաձև շէնք էր, երեք բաժանմունքներով, գլխաւոր մուտքի դիմաց մի կիսաբլուրակ խորշ կար դատաւորների համար, բուն շէնքը մի սիւնաղարդ սրահ էր, ուր ժողովուում էր բողոքաւոր հասարակութիւնը, իսկ մուտքի առաջ գտնուում էր նախագաւիթը, Այս ոճը առաջին դարերում գործ էր դրուում նաև ուրիշ մասնաւոր շինուածքների համար, բայց սովորական կարծիքն այն է, որ քրիստոնէական բաղիլիկների նախագաղափարը եղել են հռոմէական դատարանները, Շատ փոփոխութիւն պէտք չէր, որպէս զի մէկից միւսը յառաջ կար, Կիսաբլուրակ խորշը, որ յետոյ ապսիս է կոչուում, յարմարեցրած էր հոգևորական դասի բազմակու համար, բուն շէնքի մէջ տեղաւորուում էին իսկական հաւատացեալները, իսկ նախագաւիթում երախայր (նորահա-

ւատները) ու ապաշխարողները: Նախագաւիթի դուրս կար նաև մի բակ, որի կեդրոնում աղբիւր էր գտնուում, իրրե քաւութեան նշան, Ապսիսը առաջ շէնքի արեւմտեան կողմումն էր, բայց Ե. դարուց սկսած արեւելեան կողմն է ընկնում: Բուն շէնքը բաժանուում էր՝ 2 կարգ սիւներով 3 նաւերի (երեւմտեան նաւ 4 կարգ սիւներով 5 նաւերի), որոնցից մէջտեղինը գրեթէ 2 անգամ աւելի ընդարձակ էր քան միւսները և աւելի բարձր, սովորաբար սորա վերին մասում էին միայն լուսամուտներ բացուում: Շատ անգամ ապսիսը բուն շէնքից բաժանուած էր մի առանձին նաւով, որ առ ի շեղ կարում և եռաթեւ խաչի ձև էր տալիս նորան: Ապսիսի մէջտեղը դրուած էր եպիսկոպոսական աթոռը, իսկ շուրջը պատի տակ քահանայից նստարանները, Սեղանը գտնուում էր ապսիսի առաջ և սկզբում հասարակ փայտից էր ու պարզ ձև ունէր: Եետոյ սկսեցին քարից շինել՝ վերան սիւներով բարձրացրած մի հովանի, որ կիրքորիոն էր կոչուում: Այդ մասը, ուր սեղանն էր գտնուում, կամ բեմը, բաժանուում էր մնացած տարածութիւնից առանձին վանդակապատով, որ յետոյ արեւելքում հետզհետե խաչաւի կերպարանք ստացաւ: Իսկ սեղանի առաջ ընկնում էր այն տարածութիւնը, ուր կանգնում էին հասարակ կղերականները և որ կրկին վանդակապատով բաժանուում էր ժողովրդին յատկացրած մասից: Այս վանդակապատին կից բարձրանում էր ամբիոնը, որտեղից նախ սուրբ Գիրք էին կարդում, ապա սկսեցին նաև քարոզ խօսել: Մինչդեռ առաջ եպիսկոպոսը խօսում էր իւր աթոռից կամ սեղանից, Ժողովրդեան երկու սեռի և դանաղան հասակների համար առանձին առանձին տեղեր կային որոշուած բուն շինուածքի երկարութեամբ, իսկ արեւելեան յունական եկեղեցիներում կողքի նաւերը կրկնապարկ լինելով վերին յարկը յատկացուում էր կանանց:

Բաղիլիկի հետ մէկ տեղ յառաջ են գալիս կենդրոնական ձևի կոչուած շէնքեր, բոլորակ և գմբեթաւոր, որոնք սկզբում մեծ մասամբ իրրե մկրտարաններ և նահատակաց մատուռներ էին ծառայում: Բայց յետոյ արեւելքում գործ են դրուում նաև բուն տաճարների համար, և այսպէս հետզհետե դարգանալով ընդունում են այն կերպարանքը, որ յայտնի է բիւզանդական ոճ անունով: Մինչդեռ արեւմուտքում բաղիլիկի հետեւողութեամբ ուսման ական ոճն է զարգանում: Բիւզանդական ոճի ամենաճաղկեալ ժամանակը Յուստինիանոս Ա. կայսեր թագաւորութիւնն է (527—565), երբ սուրբ Ստիլիայի հաշակաւոր տաճարը շինուեցաւ Կ. Պօլսում, որ մահմետականների տիրապետու-

Թիւնից յետոյ Այա—Սոֆիա մզկիթի է փոխուել, Իսկ ուսմանական ոճը Ը. դարում սկսուելով ԺԲ. և ԺԳ. դարերում հակուում է հետզհետէ դէպի գոթականը, որ իւր կողմից մի քանի զարգացման շրջաններ է անցել՝ մինչև ուրն է սասանի տիրապետութիւնը։—Հայոց եկեղեցին ստեղծել է բիւզանդական ոճի մի յատուկ տիպ, որ թէ սկզբնական կենդրոնական ձևի օրինակներ ներկայացնել կարող է և թէ յետոյ աւելի զարգացած ձևերի. բայց այստեղ կարելի է հետքեր նկատել նաև միւս ոճերից, որոնց մի մասը գուցէ ինքնաբերաբար է յառաջ եկել, նոյն ոգու ազդեցութեամբ, որ ներգործել է միւս եկեղեցիներում։

ԲԱՐԸԼԷՆ.



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲՐՈՆԻԿՈՆ.

ԿԱԹՈՒԿԻ ԵԿԵՂԵՑԻ

Իտալական ազգային տօնը, որ այնքան մեծ շքով կատարուեցաւ սեպտեմբերի 20-ին Հռոմում, գրգռեց պապի և բոլոր երկրների կաթողիկոսների զայրոյթը, Եյդ մասին արդէն հաղորդել ենք «Արարածի» նախընթաց համարում։ Մինչդեռ Իտալացիք Հռոմի առումն և պապի աշխարհական իշխանութեան բարձումն Իտալիայի միութեան վախճանական յաղթանակն են համարում։ Վատիկանն այդ համարում է անհաւատութեան յաղթանակն և մի մեծ պատմական անիրաւութիւն։ Մինչդեռ իտալացի հայրենասէրներն ու վերածնուած Իտալիայի բարեկամները շտապում էին ուրախակից լինելու Հռոմ բերտ արքայի կառավարութեան տօնախմբութեանը, ջերմեանդ իտալացի և օտարազգի կաթողիկոսներն շտապում էին պապին մխիթարելու։

Նոյն իսկ Իտալիայում պակաս չէ այն մարդկանց թիւը, որոնք աւելի պապի կողմն են, քան թէ իրենց ազգային կառավարութեան։ Գրան ապացոյց են պապի այն խօսքերը, որ ասել է Տուրին քաղաքի մի լրագրի երեք աշխատակիցներին, որոնք սեպտեմբ. 20-ին ներկայացել են պապին վշտակցութիւն յայտնելու համար և այդ առթիւ մատուցել են 25,000 ֆրանկ յօգուտ ս. Պետրոսի լուսնայի գանձարանին։ Պապն յայտնել է այդ լրագրողներին, որ «Իտալիայում ոչ մի զիւղ անգամ չը կայ, որտեղից նա բողոք ստացած չը լինի սեպտեմբ. 20-ի տօնախմբութեան ընդդէմ»։

Ամէնքը մեծ հետաքրքրութեամբ սպասում էին թէ ի՞նչ պիտի խօսի Հռոմի քահանայապետը սեպտեմբեր 20-ի տօնախմբութեան առթիւ, Հեռագիրն արդէն հաղորդեց մեզ, որ պապը իւր կարծիքն այդ

մասին յայտնել է մի նամակով առ իւր քաղաքական քարտուղար ծիրանաւոր Ռամպոլլոն։ Պապը կարեւոր է համարել իրեն ուղղուած բազմաթիւ ցաւակցական գրութիւնների և բողոքների առթիւ յայտնել իւր կարծիքը, Լեոն ԺԳ. յայտնում է, որ ամենեկին մտադիր չէ և կարող իսկ չէ հրաժարուել աշխարհական իշխանութիւնից։ Եյթմեան վիճակը պապն համարում է անցողական, ուստի և զգուշութեամբ հետևում է քաղաքական անցքերին, որպէս զի հնարաւոր եղած վայրկենին իւր իրաւունքներին տիրանալ կարողանայ, իտալական կառավարութեան յայտարարութիւնները նա խաբեւայութիւններ է անուանում և այդ տօնախմբութիւնը հակաքրիստոնէական վարդապետութիւնների յաղթանակն է կոչում։ Հռոմի առումը ոչ թէ Իտալիայի միութիւնն է, այլ մասսոնականութեան յաղթութիւնը։

Իտալական կառավարութեան և Վատիկանի յարաբերութիւններն ուրեմն կատարեալ պատերազմական են, որովհետև Հռոմբնութեաւորի կառավարութիւնը յայտնում է, որ պապի աշխարհական իշխանութիւնը վերջացել է և Հռոմն այլևս յետ չի տալ, իսկ պապը ձգտում է այդ երկուսն էլ ձեռք բերել։

—Աերջին ժամանակներս Վատիկանի և Կուրիի նալի յարաբերութիւններն աւելի ևս վատացան։ Պորտուգալիոյ թագաւոր Դոմ Կարլոսը ցանկութիւն էր յայտնել այցելութեան գնալու Հռոմբնութեաւորին, Իտալական կառավարութիւնը կամենալով այդ առթիւ օգտուել և աշխարհին յայտնել, որ մինչև իսկ կաթողիկ իշխաններից «ամենուղափառ» թագաւորը պիտի Հռոմում այցիլէ Հռոմբնութեաւորին և այդու ճանաչէ Հռոմն իբրև մայրաքաղաք Իտալիոյ և ոչ պապի։ Վատիկանում այդ իմանալով սպառնացին Դոմ Կարլոսին, որ եթէ նա Հռոմ գայ, պապը նրան չի ընդունել և իւր նուէցի ուսին (գեսպանին) կը կանչէ Լիսաբոնից, այս բանից վախենալով Դոմ Կարլոսը հրաժարուեց իւր այցելութիւնից, Իտալական կառավարութիւնը չը դիմանալով այս վիրաւորանքին, հրամայել է իւր գեսպանին, որ բոլոր յարաբերութիւնները կտրէ Լիսաբոնի կառավարութեան հետ և միայն ընթացիկ գործերով պարապի։ Պորտուգալիոյ կառավարութիւնը ներողութիւն խնդրելով հանդերձ՝ մեղքը կամենում է իւր Հռոմի գեսպանի վերայ բարդել, որին և առժամ երկարատեւ արձակուրդ է տրուած։

Եյս հանգամանքն աւելի առաջ ունենալով Իտալիայում շատերը սկսել են պահանջել, որ կառավարութիւնը Հռոմից հանէ պապին, որ նոյնպէս ցանկութիւն է յայտնել թողնել Իտալիան սակայն